

Թիւն ստանալ, և առաջին անգամ իւր աստմաները փորձել բողոքական հասարակութեան համակրելի հայ քարոզչի դէմ:

Այժմ տեսնենք թէ քննէ ասպացուցանում այդ յօդուածը:—Թէ քարոզիչը մի աստուածաբանական սխալ է գործել ասելով թէ Աստուած կը մոռանայ ձեզ, և թէ Աստուած չի մոռացել աւելի մեծ յանցաւորներին և այլն: Թէ քարոզիչն իրաւունք չունի մարդկանց հրաւիրել աղօթելու և այլն, նախ չեմ կարծում, որ այնքան մեծ քրէական յանցանք է աղօթքի հրաւիրելը, և մի քարոզիչ անելով այդ բանը, միայն իւր խնայողքն է կատարել:

Մնացորդ սոփեստական պատճառաբանութիւններն երկնային ողորմութեան մասին, պատասխանի արժանի չեն: Մէթ թէ որովհետեւ Աստուած բազում ողորմ է, մեզ իրաւունք է տրուած, մեր սրտի ուզածի չափ մեղանչելու:

Ընթերցողը կը մտածէ գուցէ թէ յօդուածագիրը զինուած է բողոքական միսիոնարների գործունէութեան դէմ հայերիս մէջ: Երեւի այդպէս էլ չէ որովհետեւ ինքն ինքի խոստովանում է թէ անձանց բողոքականների քարոզչութեան, Պարսկաստանի այգիք քաղաքում հայերը պէտք է թողնեն իւրեանց ճշմարիտ կրօնը և յարէին այլակրօնութեան:

Ուրեմն քննէ յօդուածագրի սրտացաւը: Յարձակուել մի անձնաւորութեան դէմ, եւ քիտէ ինչ անձնական հաշուի պատճառով: Ափսոս չէր սեւացնել «Շաւիղի» մի քանի սիւնակները, և մենք զարմանում ենք որ «Շաւիղի» խմբագրութիւնը տեղ է տուել այդպիսի զաւանցանքների, իւր անաչառութիւնը ցոյց տալու համար:

Z.

ՆԱՄԱԿ ԵՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ

Թէհրան, 8 փետր. 1894

Թէհրանի հասարակութեան քաջ յայտնի է, որ ասանց մի չկատուած, ընթերցասիրտայ ընկերութիւնն իւր գրողական և ամբողջ լրագիրները ձրիաբար 1893 թուոյ հասարակութեան տրամադրութեան տակ է դրել, սոսկ Պիւրութիւն տալու որ ընթերցասիրտութիւնը մզկոր չի տրու խաւերի մէջ էլ տարածուի: Այս նպատակով կազմուեցաւ մի խումբ որը յանձնառու եղաւ մի ընթերցարանի վարել ամեն ծախսերը և պատուները հոգալ: Ուստի տարտք ենք համարում մի երկտողով ծանոթութիւն տալ մի յորդոյ ընկերութիւն Թէ ինչ վիճակի մէջ է իւր պիւհած ընթերցարանը:

Նա ունեցել է անցելու «Արարտ» (նուէր) «Արմաստեք», «Տարազ»-«Աղբիւր», «Նոր-Վար»,

«Մուրճ», «Մրմնիկ» (նուէր) և «Հնչակ», իսկ ներկայ տարու քաջի վերոյիշեալները և ունի «Մշակ» և «Ճաւիղ»:

Ընթերցարանն անցեալ տարի մուտք է ունեցել 310 դրան 16 շաֆի և ծախսել 275 դրան 9 շաֆի այս տարուայ համար մուտքի աւելորդ ունեւալով 35 դրան 6 շաֆի:

Խնդրում է ընթերցարանի կողմից իւր ընկերներին, որոնք անցեալ տարի չեն զայցել իւրեանց կամաւոր տուրքերը վճարելու, բարեհաճեն այս տարի եւս շարունակել իւրեանց տուրքերը, աւելի եւս արծարծելու համար ընթերցասիրտութեան ծաւալումը, որը իւրեանց նպատակի կէտն են բնորոշ:

Իրադարձանաձեւ՝ Արշակ Ն. Մ. Պետրոսեանց
Դանձապիսի Կարապետ Գոզնաւան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք ստացել ենք բազմաթիւ երկար յօդուածներ, որոնց բոլորը անարժան ենք գտնում հրատարակութեան. խնդրում ենք դարձեալ մեր քրակիցներից ուշադրութիւն անել հետեւեալ կետերին: ա. Անձնական վեճերը մեզ չեն հետաքրքրում: բ. Չենք կարող երեք ամբողջ թիւ նուիրել մեկ քրակիցութեան. պէտք է նիւթ տալ, լուրեր հաղորդել եւ քիչ խորհրդածել: գ. մեզ անկարելի է տաճկահայ եւ ռուսահայ բարբառներից կազմուած մի այլանդակ խառնուրդով գրուած յօդուածներ տպել: Արարատեան բարբառը մեր բոլորիս գործածած բարբառն է: Միքէ հարկաւոր է լեզուի մէջ էլ կեղծաւորութիւններ:

Ղազարեանց մեզ գրում են թէ «Շաւիղի» չորրորդ թուում մեզ հաղորդուած այն լուրը, որ վերաբերում էր այնտեղի տեսչի և ուսուցչի միջև ծագած անհամաձայնութեան, թէ և մասամբ ճիշտ է, բայց բոլորովին անտեղի

և ծնունդ է ինչ ինչ անձնական խնդիրներին, և թէ այդ առթիւ արեւելի հասարակութեան մէջ ոչ մի երկպառակութիւն չէ ծագել և չէ էլ ծագելու:

Ի պատասխան մեր Հայորդու յօդուածին, շատ երկար և գրեթէ անյարմար, բազմաթիւ նամակներ ենք ստացել որոնք էջերի սղութեան պատճառով չը ապուցուցաւ միայն նոթանց միջոց ընտրութիւն անելով, յարմարագոյնը հրատարակեցինք այս թուում:

Բուշիրից մեզ գրում են թէ՛ այնտեղի յայտնի վաճառականներից մէկի, հանգուցեալ Յարութիւն Մալգոյմի որդիքը, յարգելով իւրեանց հասնգուցեալ հօր ունեցած նպատակը, մտադիր են մօտեցնել թէհրանում էլ մի մեծ վաճառատուն բանալ, «Յարութիւն Մալգոյմ և Ողբիք» անունով: Եւստով Հանգուցեալի որդին կը ճանապարհուի դէպի թէհրան գործի հիմը դնելու, և այստեղի գործերի հետ անձամբ հետամուտ լինելու: Մալգոյմների ֆիրման Պարսկաստանում ամենահինը լինելով, թէհրանում հաստատուելիք այս նոր վաճառատանն էլ մեծ դիրք են տալու: Գործի դիւրութեան համար, թէհրանի յարգելի հայ վաճառականները չը պէտք է զյանան իւրեանց խորհուրդները և տեղեկութիւնները, այդ վաճառատան ներկայացուցչին, զերբ որ նա հասնէ թէհրան:

Մեզ հաղորդում են, որ թէ և Ռուշուր մի շատ փոքրիկ քաղաք է բայց ասանտեղի հայ հասարակութիւնը, զգալով իզական սեռի կրթութեան անհրաժեշտութիւնը, հենց Վեհափառ Կաթողիկոսի օժման հանգիսի օրը մի և նոյն ժամանակ կատարել են և Ռաշուր օրիորդաց դպրոցի բացման հանդէսը, մկրտելով նորան Վեհափառ Հայրիկի պաշտօնի անուամբ: Դպրոցը այժմ ունի 30 սանուհիներ որոնց դաստիարակում է տիկին Հռիփսիմէ Սարգսեանցը: Ուսումնարանումը դասախօսուց են հետեւեալ աւարկանները, հայոց լեզու, կրօն, թուրքականութիւն, վարելագրութիւն, զգալութիւն, ձեռագործ և երգեսգործութիւն: Գործի լաշողութեան համար, պարսից Կայսերական բանկի անօրէն ոչ. Բազիլը՝ նուիրել է 450 դրան, իսկ մի յոյն Բիզանտ անունով, 100 դրան:

Նոյն տեղից մեզ գրում են, որ լուսնվարի մէկին կայացել է մանկական-գրական թատերական երեկոյթ: Առաջին անգա-

մըն է որ հայ օրիորդը բէմ է գուր-
գալիս, աշակերտուհեաց խումբը երգել
է երգեր և մատաղ օրիորդները արտա-
սանել են ոտանաւորներ:

Ենթահայրութեամբ ստացանք Բա-
գուի «Արք» տպարանից Վ. Փա-
փազեանի «Երեք պատկերներ» վերնա-
գրով մի գրքով, գինը 5 կպէկ է:
Գրքովը շատ մաքուր տպագրուած է և
բաւականին հետաքրքիր, նամանաւանդ
վերջին պատկերը, այն է՝ Բերամ,
պարսկական գրոյց: Սակայն, ի միջի այ-
լոց, դարձնում ենք հեղինակի ուշադ-
րութիւնը հետեւեալ մեզ անհասկանալի
մի կտորի վերայ. Թ... Թ... կազմուած-
քով, բայց լանդուզն և լամառ դիւցա-
գրն եմ երգում, դիւցազն, օրի՛ կնմբի
ոյժը չեմ փոխել, ոչ մի կոպիտ (Ն) քա-
ջութեան հետ. ք... չեւ իրփա, Բեքամը
բնութիւնից քաջութիւն չէր պատգեւում:
Պէտք է նկատուի, որ ուկենալ կամբի
ոյժ, նշանակում է ունենալ քաջութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Թէհրանի ռուսաց դեսպանի տե-
ղապահը՝ տեղեկութիւն է տուել Կովկա-
սի գլխաւոր վարչութեան որ պարսից
կառավարութիւնը, հացի աստուկ թան-
կութեան պատճառով, Ատրպատականի
գաւառում, արգելեց յունկարի մէկից
արտահանել մի որ և իցէ հացարդս ի
շեաք գաւառից:

— Մոնղոլիայից հաղորդում են, որ
Եանխայի Ուրգու գաւառում մի քանի
անգամ տեղի է ունեցել երկրաշարժ,
որից մեռել են հազարաւոր մարդիկ
իւրեանց նախիրներով: Երկրի շարժումը
մինչև այժմ դեռ տեսնու է:

— Օրերուս Թուսաստանով պարսից
կառավարութիւն ստանալու է 18 փուտ
39 ֆունտ արծաթ:

— Կովկասի հայ քաղերները հաղոր-
դում են, որ օրերուս Բագուում վախ-
ճանուած տեղացի նաւթավաճառ Օվա-
կիմ Ալամեանը կտակեց Հայոց Մար-
դասիրական ընկերութեան 20,000 ռուբ-
Այս գումարից 10,000 տրուած է նայն
ընկերութեան տրամադրութեան ներքոյ,
5,000 ռուբլին նշանակուած է յանրաւն
ննջեցեալի բարձրագոյն ուսումնարաննե-
րում մէկ ստիպենտիատի համար, 3,000
ռուբլի, յոգուտ ընկերութեան գրադա-
րանին, 3,000 ռուբլի տեղացի եկեղեցի
չէնքը նորոգելու համար, իսկ մնացեալ

5,000 ռուբլու առկուր այն բանի համար,
որ իւրաքանչիւր տարուայ Զատիկ օրը
տրուի չքաւորներին: Անկախ սնորհից
ննջեցեալի կինը, ի իշատակ իւր ամուս-
նու, նորից 2,800 ռուբլի, յոգուտ ս.
Լըմիածնի, Երուսաղեմի և տեղւոյն հայ
հոգևորականութեան:

(ՈՅՆ. ՕՃ.)

— Անգլիերէն «Գրաքիկ» քաղերից
քաղում ենք հետեւեալ տեղեկութիւննե-
րը: Պետերբուրգում 1903-ին պէտք է
կատարուի այդ քաղաքի 4-րդ հազարու-
թեան 200-երորդ տարեգարձը: Առա-
ջարկութիւն կայ մի մեծ ազգային ցու-
ցահանդէս կազմակերպել ռուսաց մայրն-
քաղաքում ի պատիւ այդ գէպքին:

— Այս տարի գինին չափազանց առատ
է Զրանսիայում:

— Մեծ ջանքեր են լինում, որ Անգ-
լիան այս մայիսին լաւ ներկայացուի
Անգլերի ցուցահանդիսում: Յուշահան-
դիսի շինութիւնները գրեթէ վերջացած
են:

— Աշխուհի ամենամեծ դիտարանը
պէտք է կառուցուի Միսցեալ-Նահանգ-
ներում: Դա պէտք է կազմէ Զիկագոի
համալսարանի մի բաժանմունքը, բայց
քանի որ հիշատակուող նկատեցին, որ
մի մեծ քաղաքի մերձակորութիւնը կա-
րող էր խանգարել դիտահան փորձերը,
դիտարանը այժմ պէտք է կառուցուի
Վիսկոնսին նահանգում, Ժէնեվա լճի
մէջտեղում եղած մի բաց գետնի վերայ:
Դիտարանի գլխաւոր հեռագիտակը 40
բլմնչափ հաստութիւն պէտք է ունենայ,
այսինքը 4 բլմնչափ աւելի հաստ քան
մինչև այժմ եղած ամենամեծը:

Ովկիանոսի մի դաղտիքը վերջերս
դուր է ընկած, մի շոգեխաւ մտնում է ամե-
րիկական մի նաւահանգիստ քաղաք տա-
լով իւր ետեւից մի խնդրական հինչ քաւի
խաւակը, որ ըստ երեւոյթին կէս դար ա-
ռաջ այլուտել էր և մնացել լատակում
մինչև որ ծովի նեղքին մի շփոթութիւն
նշ զորան վեր է հանել: Երեք կմախք-
ներ գտնուեցան տախտակամածի վերայ
և մէկը մի մարդու, որ եօթը անգլիա-
կան ոտք բարձրութիւն պէտք է ունե-
լարած լինէր: Եւանջիլիսի տեսնակում
պտտուեցան մի քանի ժամացոյցներ, մար-
դարեալ մի ցարդ, և կաշեայ մի քսակ
որի մէջ կար հազար ոսկու արժողու-
թեամբ, անգլիական Գէնի դրամ 1809
թուականով:

«Ռուսի օր Ռի-
վիուզ» անգլիերէն ամ-

սարերի, յունկարի 15-ի
տեսութիւն մէջ սուրում է
բոլոր ազգերի հոգեւոր պե-
տերի պատկերները. դո-
րանց մէջ յորրորդ տեղն է
բռնում Վեմախառ Հայրի-
կի պատկերը: Պէտք է խոս-
տովանուի, որ պատ-
կերը շատ յաջողուած է

— Անգլիերէն մի ուրիշ թերթից քա-
ղում ենք հետեւեալը, Հնդկաստանի սակի
կառավարութեան մի օրհանոց: Ուրիշիւր,
ամերիկացի մի գաւառագործ, վերջին վի-
ստեցից մէկն է Հնդկաստանի այդ հակ-
ման, այն է՝ ամիր կառավարու, Վերո-
յիշեալ քաղաքում մի քանի տարի եղած է
Հնդկաստանում, և ռազագրութեամբ ու-
նամանաիրած է ժողովրդի բարքը և առ-
վարութիւնները: «Ու մի հիմար» ա-
տում է քրքրօրէ, երբ է փցն չէ Երազում
իւր ոսկին բանկը գնելու: Չէ կարելի
նորան համոզել որ բանկէրի տեսութիւնը
հաւատարմեմ վարդիկ են, մանաւանդ երբ
իւր ազգից լինեն նախ: Երբ որ բնիկ
երկրագործը սակի է արգանում իւր արդիւ-
նաբերածը համար, նա խորում է այդ
օտին, կամ պատնում է ոսկեքնչի մօտ
գորդերիցին ժողով, որը շատ քիչ նա-
գար է կրում իւր վերայ: Ովկին շատ սա-
կաւ է տեսնում իբրեւ ընթացիկ գրաւմ
Հիւսկարար այն սակին, որ ամեն տարի
մտնում է Հնդկաստան, նորա ամառը
կաշ կշիռները գոցելու համար, քանի չէ
մտնում, աշխարհի վաճառականութեան
մէջ: Այդ ոսկին նայնչափ նշանակու-
թիւն է ունենում իբրեւ դրամ որչափ
ոնեւր երբ դեռ հանքից արտահանուած
չեք Երբ մեկը քիչ գանձ խորում է մի
որ և է տեղում մեծար նկարագրութիւնը,
գնում է մի կտոր մագաղաթ վեցաւ:
որը նա միշտ կրում է իր մարմնի վերայ:
Երբեքն պիտահում է որ այսպիսի մի
յայտնութիւն փրօզ ամենապարտութիւնը
կարում է կամ վազդի կերակուր է դառ-
նում, այսպիսի գէպքերում յորաւ հապ-
տութիւնը շատ անգամ երբեք չէ դը-
տնում:

— Պեկրաւից հաղորդում ենք որ Մի-
լան թագաւորի հայրը այստեղ հաճաւ:
Աւէքսանը թագաւորը նախարարապե-
տին յայտնեց թէ իւր համագումն է որ
հօրը ներկայութիւնը պէտք է մարդիկ

իրանց կացութիւնը: Թագաւորը իւր մօտ կանչեց երեք կուսակցութեանց պետերը: Ազգային ժողովը իւր նիստերը պէտք է դադարեցնէ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ի Ն Ե Ր

Փահրէ, փետ. 1231 լուսնվարի: Խէղիվը այսօր ընդունեց ժէներալ Պիշնէ-րին և նորա միջնապահներին շատերին պաշտօնի բարձրացում տուեց:

Փարիզ, փետ. 1231 լուսնվարի: Մի սպասաւոր որ ծառայութիւնից դուրս էր ձգուած, մի ումբ ձգեց Տերմինուս հիւրանոցի բազմամարդ սրճարանի մէջ: Սրճարանը փնտռուեցաւ, երկու հոգի ստանուեցան և քսաներեք հոգի փտան-գաւոր կերպով վիրաւորուեցան: Յանցաւորին բռնեցին, բայց նախ քան բռնուե-լը ատրճանակով երկու հոգի վիրաւորեց:

Փարիզ, 113 փետրվարի: Ռուսներ ձգող մարդու անունը Լը Բրեւոն է: Նա խոստովանելով է, որ կամենում էր վարկանի վրէժը լուծել, և լայնում է որ ուրիշ նոյնանման եղեանագործութիւններ պէտք է զարգանալուին կատա-րուել:

Փարիզ, 214 փետրվարի: Ռուսներ ձգող մարդու իսկական անունը Լը Բրեւոն չէ այլ Լաիլ Հէնրի, նա չէ անաջ եղած էր Լոնդոնում, և որդի է մի գատապարտուած կոմիտիստի:

Լոնդոն, 416 փետրվարի: Ռուսներ երկ գիշեր, համայնքների ժողով մեջ պատասխանելով մի ուրիշ խնդրի, առիթ ծանցաւ մի ակնարկ փելու: Հարկութի վերջին առաջարկի վերայ, և բացատրեց որ կառավարութիւնը չէ մտածում ման-նաւոր հարկ դնելու արծաթի վերայ, Հնդկաստանի դրամական քաղաքակա-ն թեանն օգնելու համար: Համայնքնե-րի ժողովի մի քանի անդամները ընդու-նեցին մի պատգամաւորութիւն ներու-ցից, որը քաղաքում էր գրեւորական ու-թի աւերացման դէմ, և նոքա խոստովանե-ալով մասին մի վիճաբանութիւն բարձ-րացնել առաջին պատեհութեան: Բար-դին անուշով մի ֆրանսիացի անարխիստ երկ գիշեր գտնուեցաւ Գրինիչի գիտա-բանի մօտ, ստրապիլի կերպով անդամա-հատուած: Նա իսկոյն անդամաւորուեցաւ հիւանդանոցը և փոխիջապէս մեծաւ: Կարծոււմ է, որ պալլուցիկը տանելու փնտրանք նա վաղ է ընկել:

Լոնդոն, 416 փետրվարի: Համայնք-ների ժողովում այս գիշեր արդ Գրին-պատասխանելով մի հարցի ասաց, որ վերին Մէկոնգի սահմանների որոշումը

եղանակի պատճառով յետաձգուած էր մինչև աշուն: Կիւլում մի սարգիսի ար-կած պատահեց, քերմանական զրահաւոր Բրանդէնբուրգի արագընթացութիւնը փորցելու ժամանակ: շոգիի խողովակը պալլեց սաղանելով 41 հոգի, և վիրաւո-րելով 7 հոգի: Բարդին, որ սաղանե-ցաւ ումբով Լոնդոնի անարխիստների մէջ նշանաւոր մի մարդ էր: Ռիօ-Չա-նէլիօից հաջած անդակութիւնները լայն-նում են, քր գեղին ցերմը բռնեց է բրի-տանական, ամերիկական, աւստրիական և պորտուգալական մարտանաւերի մէջ, և որ աւստրիական հրամանատարը նոյն հիւանդութիւնից մեղել է: Չերմը նոյն պիս կոտորած է անում վաճառականա-կան նաւերի մէջ:

Լոնդոն, 517: Ստիկանութիւնը խու-զարկութիւններ է արել անարխիստների մի ժողովի մէջ Լոնդոնում, և մի քանի թղթեր է բռնել: Ութուն հոգի անար-խիստ քննութեան են ենթարկուած բայց ձերբակալութիւններ տեղի չեն ունեցած:

Լոնդոն, 618 փետրվարի: Նոր տե-ղեկութիւնները հազորդում են, որ 4 հոգի էլ մեղել են Բրանդէնբուրգ զրա-հաւորի մէջ տեղի ունեցած պալլումից:

Հոռ, 518 փետրվարի: Մասաչուսէթս տեղի ունեցած վերջին անկարգութիւն-ների սարգիսիներից երկու հոգի դա-տապարտուած են մէկը 25 և միւսը 12 տարուայ առանձնացած բանտարկու-թեան:

Թէրաւ 1224 փետրվարի 1894
Միամական արժէքներ (Բորսա)

Պարսկական	20 դէ էշրէֆին արծէ	32	—
6	10	17	—
5	8	—	—
Ռուսական	Ոսկին (պոլին)	41	—
	Մանիթը (թութ)	5	10
Անգլիական	Լիթան	53	—
Ճրմոսիական	Ճրմոսի	2	—
Տանկական	Մէթրիէն	38	—

«ՇԱԽԻՂ» ՊԱՏԱՌԱՆԻ

Թէրաւ, Թ. Ի. Ա. Մեզ ինչով է հետաքրքրում, թէ մեր ակնարկած պարոնը իւր փոքր շուպլում է ոչ հարկաւոր առարկաների հետ: Նախ ծնգ ինչ յետոյ մեզ ինչ: ՆՅԷ ուղում էր խնայողութիւն օրոգիւ: Միւթ դորա համար հարկաւոր է ակնարկու-թիւններ անել այս կամ այն անձի վերայ, և թէ մեզ ամենեւին չէ հետաքրքրում մեր դրամապարձ ընկերութեան ինչ լինելը, ո՞րի միակ անդամակիցը ինչպէս ասում էր, դուք ինքներդ էր:

Արտօնատեր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց:

Յ Ա Յ Տ Ե Ր Ը Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ր

ԳԻԼԱՆԻ ԼԻԲԵՐԱՅՈՅ ԹԵՏՈՒՄ

Աւետիս Եփեսեանի բնակարան և կերակուր, կա հաւորուած աննականք. քաղաքի կեդրոնում, կառավարութեան ապարանքի հանդէպ:
ԳՆԵՐԸ 2ԱՓԱԽՈՐ
Հեռագրի հասցէ «Աւետիս Թեթոն»:

Hotel de Ghilan

à Recht-Perse

Situé au centre de la ville vis-à-vis du Palais du gouvernement
Chambres meublées, nourriture.

A DES PRIX MODÉRÉES

Adresse telegraphique „Avedis-Recht“

GHILAN HOTEL

Resht Persia

Board, lodging and furnished rooms, situated in the centre and opposite the government buildings.

Prices moderate

Telegraphic address „Avedis-Resht“

ГОСТИНИЦА ГИЛАНЪ

ВЪ РЕШТЪ-ПЕРСИЯ

Аветиса Осишанца

Меблированные комнаты, обѣдъ и ужинъ. Въ центрѣ города, противъ правительственнаго двора. ЦЕНА УМѢРЕННАЯ.
Адресъ телеграфу „Аветисъ Рештъ.“